

հաւասարութեան վայրացն բարձրացեալ իբրեւ ի բլրի. պարխսպն կանգուն, և եկեղեցին կործանեալ ասացին, սովին անուամբ բերդ կամ աւան ոչ տեսաք ի պատմադիրս յիշատակեալ, գառնաւք շրճեմք ի վեր ընդ ճանապարհս գնացից ի Կարուց՝ զգիւղսն թուել:

18: Ճալա. Հ. Տ. 19: Արազ օղլու. Տ. 20: Վայնալըխ. Տ:

21: Խօզլուճա. Տ. գեղեցիկ և բարձրադիր վանք. յորում են ասեն բազում արձանագրութիւնք: 22: Ալաճա. Տ. կիսով չափ աւերեալ վանք:

23: Կորխանա. Տ. փոքր վանք, Խըրխպուլախ. Պուլանըխ. Աիկիօզ ամայի գիւղատեղիք. յԱիկիօզ և աւերակ վանք:

24: Հաճի-վելի. Հ. Տ. բերդ. վեց ժամաւ յԱնույ նոյնչափ և ի Կարուց հեռի կայ. և արօտական վայրք սորա յոյժ յոյժ ընդարձակք:

25: Սուպաթան. Տ. սորա ջուրք յառաջ խաղացեալ սուղին ընդ երկրաւ:

26: Վիւլ օրեն. Տ:

27: Վերին Կետիկեր. 28. Ներքին Կետիկեր: 29. Օրթա Կետիկեր. Հ. ի ստորոտս երից գիւղիցս բազում ակունք բղենն. որք են ասեն գաղտնի ոտք ջուրցն սուղելոց ի Սուպաթան. և զբազում ջրաղացս շրջեն ի ձմերան իսկ ոչ սառելովն:

Առ հնովք պարտ է լինել անուն տեղեացս Վետուկ. զի յարձանագրութիւնս տեսանի գրեալ. զջաղացն իմ որ ի Վետուկ ետու յիշատակ: Ապա և այժմեան անունդ Կետիկեր՝ է աղճատեալն բառիս Վետուկ. առեալ ի ջուրց անտի որ միացեալ կազմեն զգետակ, որ ի վեր քան ըզ-

Վայլար մտանեն յԱխուրեան: Ի ջրոյ աստի մասն ինչ տու աւերակ Խարախուլէիւ ածեալ տարեալ են ի Խօշավանք. զմնացորդս առուատեղեացն տեսաք և մեք:

30. Խալիֆ օղլու, Տ. այլ և աւեր գիւղքս Մշկօ. և Խըրխլար: Համեմատութեամբ ընդարձակութեան հողոյն և բարեբերութեանն, մին ի չորից մասանց հազիւ է այժմ երկիր մշակեալ. ուր յըստեն դրամէ ցորեան գարի, կտաւատ, իւղ, պանիր, և անասուն, զորս և նախապատրաստ զրամովք գնեալ վաճառականք, ածեալ տանին յԱ. Պօլիս:

Արկարութիւն այսր բաժնի առ Ախուրեան գետով հինգ. առ Կարուց գետով վեց. և առ սահմանս Կարուց նոյնչափ ժամուց է ճանապարհ:

(Մատենադարանի Գրադարան):

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԽԱՂԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԷՁ:

Մանուկների հետ վարմունքը մեզ ծանօթացնում է մարդի ամենաքաղցր. ամենագրաւօղ կողմերին. ինչ որ մարդս բարձր, ազնիւ, մեծ յատկութիւններ ունի,—բոլորը տեսնումենք մանուկների խաղերի մէջ նոյն պարզութեամբ, ինչպէս այր ամուսնի աշխատութեան մէջ պատանեակի ձգտումների մէջ, կնոջ հոգսերի մէջ,—իսկ շատ անգամ առաւել պարզ և որոշ կերպով ևս:

Ապառահէ երբեմն որ դառն փորձութեան ծանրութեան տակ, մարդկային գործերին նայելով, սկսումէ պակասել

մեղանից հաւատը դէպի մարդիկ և կորչումէ յաւագոյն ապագայի յոյս,—այն ժամանակ խաղացող մանուկը կարող է նորէն այն յոյսը մեզ դարձնել, նորէն այն հաւատը մեր մէջ զօրացնել: Խաղացող մանուկի մէջ մենք տեսնումենք միշտ Բն-Բն ճշմարտութեան այս զօրաւոր քարոզիչը:

Խաղը երեխայի աշխատ-Բն է: Խաղալիս երեխան իւր գործ է կատարում,— իւր ոյժերը զարգացնելու համար առաւել նշանաւոր պայմաններից մին է կատարում: Մայրը ուրախանումէ, երբ խաղը կհանդարտեցնէ վերջապէս փոքրիկ խռովարարին: Մայրը վայելութիւն է ստանում իւր առաջ խաղացող երեխայի սիրուն տեսարանից: Բայց հայրերը և մայրերը թող աւելի խորամուխ լինին խաղի նշանակութեանը,— թող հասկանան նոքա, որ երեխայի զարգացման համար աշխատող բոլոր դաստիարակներից և ուսուցիչներից խաղը ամենանշանաւորներից և ամենայաջողներից մինն է. և միայն թէ խաղի մէջ ծայրացեալ անմտութեան առաջն առնված լինի, այս դաստիարակը անկասկածելի յաջողութեամբ կկրթէ երեխայի խելքը և սիրտը:

Խաղը արտայայտված հակումն է դէպի գործունէութիւն: Հակումն դէպի գործունէութիւն շատ սաստիկ է և վաղ արդէն երեւումէ զօրեղ կերպով: Առ բաւարարութիւն է պահանջում: Խաղը բաւարարութիւն է տալիս այս պահանջման: Խաղի շնորհով ամբողջ են մնում քանի մի բաժակներ և ամաններ, որոնք յատակի վերայ երևի սփռվելու էին փոքրիկ աղմկարարի ձեռով: Խաղը հեռացնում է քանի մի «կարողութիւններ», և փոքրիկ աշխարհաքաղաքացուն ազատու մէ այն հարուածներից, որոնք յաճախ շնորհվումեն նորան անարդարութեամբ և ի մեծ վնաս նորա: Խաղը հեռացնումէ նորանից ձանձրոյթ — այս մահաչափ թոյն, այս զարհուրելի ժանտախտ, որ սովորեցնումէ նորան ամենաթանկագինը ոչ ինչ համարել և վատնել կարծես թէ նա ծանրութիւն

կամ բեռ լինէր — այն է ժամանակը: Խաղը ոչնչացնում է յամառութիւն, թոյլ է տալիս, որ մանկական հոգին տրտմութիւն պատէ, արդելք է լինում ծուլութեանը, որ երեխայի մէջ նոյն չափ անախորժ է, որչափ և վտանգաւոր . . .

Այո, խաղը մեծ գործեր է ստեղծում: Առ զարգացնում է հոգու ուրախ յօժարութիւն և պարզութիւն — այս քաջ ընկերակիցներ կեանքի պատերազմի մէջ: Խաղը սովորեցնում է հաստատ ձեռով աղբիւրներից այն ուրախութիւններ հանել, որով կեանքը յիրաւի բաւական հարուստ է: Խաղի միջոցով սիրտը սովորում է նախազգաստացմունք, սէրի ապացոյցներ, ընկերները խաղի մէջ սերտ կապով կապող բարեկամութիւն զգալ, վերջապէս այն ամեն տպաւորութիւններն զգալ, որով կաղմակերպվումէ մանկական սիրտը և պատրաստվումէ բարեգործ կեանքի: Խաղը զարգացնում է և ամբացնում է երեւակայութիւն — բնութեան այս գեղեցիկ ձիրք, որի նշաւորութիւնը դժուար թէ չնոստովանէ ամենացամաք բարոյախոյզն ևս: Վաւազանին մանուկը նայումէ երբեմն իբրեւ իւր ձեռն, երբեմն, իբր իւր զէնքին կամ իբր իւր թրին: Յըցված փայտը դառնում է նորա համար տուն, սար, բեռնակիր անասուն: Մութ անկիւնը դառնում է նորա համար շքեղ դահլիճ, աթոռ — բեմասացի ամբիօն, թաց աւազը — կարկանդակ և այլն: Ոմանք ունայնասէր ծնօղներն բաւական մեծ գումարներ են մխում այն խաղալիքներ և շինծու ձիեր գրնելու, որոնք զուր և բոլորովն աւելորդ ծախսեր են, մանրավաճառների խանութների պատուհանների մէջ շարված, միմիայն սոցա ագահ գլուպանների սնունդ տալու համար:

(Շարունակելի)